Հավելված

# ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՋՆԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

# ԾՐԱԳԻՐ

## *ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ*

### *1. ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ և ՆՊԱՏԱԿՆԵՐԸ*

Ծրագիրը մշակելիս հաշվի է առնվել նախորդ տարիներին բնապահպանական վճարներից կատարված մասհանումների հաշվին համայնքում իրականացված ծրագրերը, ինչպես նաև ներկա պայմաններում առավել հրատապ լուծում պահանջող խիստ մտահոգող հարցերը:

Հրազդան համայնքի «Հրազդան Ցեմենտ Քորփորեյշն» ՓԲԸ և «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՏԷԿ)» ԲԲԸ աշխատանքի արդյունքում մթնոլորտ արտանետվող նյութերի բացասական ազդեցությունը նվազեցնելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել մշակել բնապահպանական ծրագիր:

Իրականացվող ծրագրի գլխավոր նպատակն է հնարավորինս նվազեցնել շրջակա միջավայրի՝ մթնոլորտի վրա տնտեսական գործունեության վնասակար ներգործությունները՝ ապահովելով շրջակա միջավայրի և մարդու առողջության պահպանումը:

Կազմակերպությունների կողմից արտադրության վնասակար արտանետումների ցուցանիշը նվազեցնելու, կյանքի որակի բարելավման համար նպաստավոր պայմաններ ստեղծելու նպատակով՝ ծրագրի շրջանակում նախատեսվում է իրականացնել թվով 70 մշտադալար եղևնիների և 65 հատ գնդաձև ակացիայի ձեռքբերման և տնկման աշխատանքներ Հրազդան համայնքի Զ. Անդրանիկի պողոտայի շրջանաձև խաչմերուկից մինչև պուրակային փողոց տանող ճանապարհի հողածածկ հատվածում՝ շուրջ 700քմ տարածքում, ինչպես նաև 3-րդ փողոցի մինչև 300մ տարածքում: Որի արդյունքում տվյալ հատվածի մայթերը կբարեկարգվեն:

Վնասակար արտանետումներն իրենց բացասական ազդեցությունն են թողնում բնակչության առողջության վրա, մասնավորապես՝ համայնքում տարածված են սիրտ-անոթային խնդիրների հետ կապված հիվանդությունները: Այդ պատճառով մշտադալար եղևնիների թվի ավելացումը ունի ինչպես բնապահպանական, այնպես էլ առողջապահական կարևորություն, քանի որ ծառերը կենսական էներգիա են հաղորդում, որը բուժում է մի շարք նյարդային և այլ խրոնիկ հիվանդություններ, արդյունքում՝ համայնքում կբարելավի կյանքի որակը:

Բնապահպանական հիմնախնդիրների լուծման արդյունքների շահառուները Հրազդան համայնքի բնակչությունն է:

### ԾՐԱԳՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Ծրագիրն իրականացվելու է Հրազդան համայնքի վարչական տարածքում գործող ձեռնարկությունների կողմից արտադրական գործունեության հետևանքով շրջակա, այդ թվում օդային ավազան վնասակար նյութերի արտանետման և սպառման թափոնների սահմանված կարգով տեղադրման, շրջակա միջավայր վնասակար նյութերի և միացությունների արտանետման համար բնապահպանական վճարներից, համայնքին կատարված մասհանումների միջոցներով:

Ծրագրի իրականացման համար բնապահպանական վճարներից հաշվարկված մասհանումները չբավարարելու դեպքում, համայնքն իր միջոցներից լրացուցիչ հատկացումներ կկատարի ծրագրի իրականացման համար:

## 2. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐՆ ՈՒ ԾԱԽՍԵՐԸ

Ծրագրի շրջանակում նախատեսվում է իրականացնել ծառերի ձեռքբերման և տնկման աշխատանքներ Հրազդան համայնքի տարածքում:

Աշխատանքների նախահաշվային ընդհանուր արժեքը՝ ծառերի ձեռքբերման մասով կազմում է 3 076 910 (երեք միլիոն յոթանասունվեց հազար ինը հարյուր տասը հազար) ՀՀ դրամ, իսկ ծառատնկման աշխատանքների մասով 400 000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամ (աշխատանքները կիրականացվի Հրազդանի համայնքապետարանի «Մաքուր Հրազդան» ՀՈԱԿ-ի միջոցով): Ծրագրի շրջանակում լրացուցիչ ծախսերի առաջացման դեպքում, համայնքն իր միջոցներից լրացուցիչ հատկացումներ կկատարի՝ ծրագրի ամբողջական իրականացման համար:

Աշխատանքների մեկնարկը կտրվի 2025 թվականի ապրիլ ամսվանից:

Հաշվի առնելով, որ վերոհիշյալ ծրագրի իրականացումը կնպաստի համայնքի բնապահպանական հիմնախնդիրների լուծմանը, օդի աղտոտվածության նվազեցմանը խնդրում ենք քննարկել և մեր համայնքին տրամադրել ֆինանսական միջոցներ՝ ծրագրերի իրականացման համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՎԱԿ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Կատ.՝ Վանուհի Բարեղամյան
Հեռ.՝ (060)704051

<u>ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ</u>

| | 3. Ծրագրի կառուցվածքը | 4. Անցկացվող արդյունքների չափանիշներ |
|---|---|---|
| Ընդհանուր նպատակը | Համայնքի բնական միջավայրի պահպանման խնդիրների լուծում | Կանաչապատ տարածքների բարեկարգում և ավելացում |
| Իրականացման նպատակը | Համայնքի բնապահպանական, սանիտարական վիճակի բարելավում | Կքարելավվի համայնքի բնապահպանական վիճակը: |
| Ակնկալվող արդյունքները | Հրազդան համայնքի Զ. Անդրանիկի պողոտայի շրջանաձև խաչմերուկից մինչև պուրակային փողոց տանող ճանապարհի և 3-րդ փողոցի հողաձձկ հատվածում ծառերի տնկման աշխատանքների իրականացում: | Նախատեսվում է իրականացնել Զ. Անդրանիկի պողոտայի շրջանաձև խաչմերուկից մինչև պուրակային փողոց տանող ճանապարհի հողաձձկ հատվածում շուրջ 700քմ տարածքում, ինչպես նաև 3-րդ փողոցի մինչև 300մ տրածքում ծառատնկման միջոցառում՝ թվով 70 մշտադալար եղևնի, գնդաձև ակացիա՝ 65 հատ:<br>Մշտադալար եղևնիների թվի ավելացումը ունի ինչպես առողջապահական, այնպես էլ բնապահպանական կարևորություն, քանի որ տնճիները կենսական էներգիա են հաղորդում, որը բուժում է մի շարք նյարդային և այլ խրոնիկ հիվանդություններ:<br>Արդյունքում կբարելավի համայնքում կյանքի որակը: |
| Ակնկալվող արդյունքներին հասնելու համար անհրաժեշտ միջոցառումները | Բնապահպանական միջոցառումներ՝ 3 476 910 22 դրամ արժողությամբ: | Կատարման ժամկետները՝ 01.04.2025- 01.05.2025 |

5. Հրազդան համայնքի 2025 թվականի բնապահպանական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները և դրանց ֆինանսավորման համամասնությունները

| Հ/Հ | Միջոցառման անվանումը | Գումարը (Հազար ՀՀ դրամ) | Համամասնությունը (%) |
|---|---|---|---|
| | ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ | 3 076 910 | 100 |
| 1 | Եղևնիների ու ակացիաների ձեռքբերում | 3 076 910 | 100 |
| | Ընդամենը | 3 076 910 | 100 |

6. Համայնքի 2025 թվականի բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի հաշվին նշված ծրագրի իրականացման անհնարինությունը կապված է ընկերությունների կողմից վճարներ չկատարելու հետ, որի դեպքում համայնքը ծրագիրը կիրականացնի սեփական միջոցներով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԵՎԱԿ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Կատ.՝ Վանուհի Բարեղամյան
Հեռ.՝ (060)704051